ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4321-Ա « 07 » նոյեմբերի 2024թ.

ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ, 12-րդ կետի 1-ին ենթակետով, 101-104-րդ կետերով.

1. Կենտրոնացված կարգով իրականացվող գնումների գործընթացում պատասխանատու ստորաբաժանումներ սահմանել՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակով գործող մանկապարտեզներին (այսուհետ՝ Կազմակերպություններ): Պատասխանատու ստորաբաժանումներին վերապահել պայմանագրերի ամբողջությամբ կամ մասնակի լուծումները և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործառույթները:

2. Կենտրոնացված կարգով իրականացվող գնումների գործընթացի կազմակերպման գնումների համակարգող ստորաբաժանում սահմանել՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչությանը:

3. Հաստատել՝

1) սույն որոշման 1-ին կետով սահմանված պատասխանատու ստորաբաժանումների 2025 թվականի կարիքների համար կենտրոնացված կարգով իրականացվող գնումների ցանկը՝ համաձայն հ.1 հավելվածի.

2) կենտրոնացված կարգով իրականացվող գնումների գնման հայտի ձևաչափը՝ համաձայն հ.2 հավելվածի:

4. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետով սահմանված պատասխանատու ստորաբաժանումներին՝ սույն որոշման հ.1 հավելվածում նշված գնումների շրջանակներում կազմել և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչություն ներկայացնել սահմանված կարգով հաստատված գնման հայտերը՝ համաձայն հ.2 հավելվածով սահմանված ձևաչափի:

5. Հանձնարարել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին՝ սահմանել հսկողություն սույն որոշման 3-րդ կետով նախատեսված հայտերի ներկայացման նկատմամբ:

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետին՝

1) սույն որոշման 3-րդ կետով նախատեսված հայտերը ստանալուց հետո, սահմանված ժամկետում ուսումնասիրել դրանց համապատասխանությունը գնումների մասին օրենսդրությանը, անհրաժեշտության դեպքում ապահովել ճշգրտումը և դրանց հիման վրա, մինչև սույն թվականի դեկտեմբերի 15-ը կազմել և հրապարակել կենտրոնացված կարգով իրականացվող գնումների պլանը.

2) ապահովել կենտրոնացված կարգով իրականացվող գնումների պլանում ներառված ապրանքների գնման գործընթացի կազմակերպումը, սահմանված կարգով պայմանագրերի կնքումը և դրանց տրամադրումը Կազմակերպություններին:

3) ապահովել կենտրոնացված կարգով իրականացվող գնումների գործընթացների շրջանակներում երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովումների վերադարձը:

7. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետին՝ ապահովել Երևանի քաղաքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակով գործող մանկապարտեզների կողմից ներկայացված՝ սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ցանկում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերի միասնականությունը:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Կազմակերպությունների, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների, հանրակրթության և վերահսկողության վարչությունների պետերի վրա:

9. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված հ.1
Երևանի քաղաքապետի
07.11. 2024 թ.
N 4321-Ա որոշման

ՑԱՆԿ
ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Ապրանքի անվանումը
1	Աղ
2	Այլուր
3	Բալ /հունիսի 15-ից մինչև օգոստոսի 1-ը/
4	Բուսական յուղ /ձեթ/
5	Բրինձ
6	Բազուկ
7	Բլղուր
8	Գազար
9	Գարեձավար
10	Դափնետերև
11	Դդմիկ /մայիսի 15-ից հոկտեմբերի 15-ը/
12	Դդում
13	Դեղձ /օգոստոսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը/
14	Լոբի /հուլիսի 1-ից հոկտեմբերի 1-ը/
15	Լոբի հատիկավոր
16	Լոլիկ /հուլիսի 1-ից հոկտեմբերի 30-ը/
17	Խնձոր
18	Ծաղկակաղամբ /սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը/
19	Ծիրան /հունիսի 1-ից մինչև օգոստոսի 1-ը/
20	Կակաո
21	Կանաչի
22	Կանաչի անանուխ /նանա/
23	Հազար /մարոլ/
24	Կարտոֆիլ /հունիսի 15-ից սեպտեմբերի 15-ը/
25	Կարտոֆիլ /հունվարի 1-ից հունիսի 15-ը/ /սեպտեմբերի 15-ից դեկտեմբերի 31-ը/
26	Կաղամբ
27	Կիտրոն

28	Հնդկաձավար
29	Հաճարաձավար
30	Մակարոնեղեն
31	Շաքարավազ
32	Շաքարի փոշի
33	Ոլոռ /պահածո/
34	Ոլոռ
35	Ոսպ
36	Չամիչ
37	Չոր միրգ առանց կորիզի
38	Քաղցրաբլիթ /պրյանիկ/
39	Ջեմ
40	Սմբուկ
41	Սոխ
42	Սիսեռ
43	Սալոր
44	Սոդա
45	Վանիլին
46	Վաֆլի
47	Վարունգ /մայիսի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը/
48	Տանձ
49	Տաքդեղ /պղպեղ/ /հունիսի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը/
50	Տոմատի մածուկ
51	Ցորենաձավար
52	Բանան
53	Մանդարին
54	Նարինջ
55	«Նարինե» 1
56	Կաթի փոշի
57	Վարսակի փաթիլներ
58	Թխվածքաբլիթ /печенья/
59	Թթվասեր
60	Կարագ
61	Կաթնաշոռ
62	Կաթ
63	Հաց
64	Թռչնամիս /հավի բուդ/
65	Թռչնամիս /հավի կրծքամիս/

66	Հավի ձու
67	Մածուն
68	Պանիր /Լոռի/
69	Պանիր /Չանախ/
70	Տավարի միս
71	Խրթխրթան եգիպտացորենի փաթիլներ
72	Սպիտակաձավար
73	Թեյ
74	Մրգահյութ խնձորի
75	Մրգահյութ դեղձի
76	Մրգահյութ մասուրի
77	Կեքս
78	Մանրահաց

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված հ.2
Երևանի քաղաքապետի
07.11. 2024 թ.
N 4321-Ա որոշման

ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԱՉԱՓ

Հ/Հ	Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը	Գնման առարկայի քանակը	Գնման առարկայի մեկ միավորի առավելագույն գինը	Գնման առարկայի մատակարարման վայրը	Գնման առարկայի մատակարարման ժամկետները	Գնման առարկայի վճարման պայմանները	Անհրաժեշտության դեպքում՝ մատակարար-վելիք ապրանքի որակի գնահատման նպատակով նաև փորձագիտական եզրակացություն ներկայացնելու պահանջը	Գնահատող հանձնաժողովի թեկնածուի անունը, ազգանունը, պաշտոնը

…… …… ……
(կազմակերպության անվանումը) (ստորագրություն) (անուն ազգանուն)
Կ.Տ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ